

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**35**

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**35**

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**35**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան Լինտ, Արմեն Մովսաֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան, Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 35, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
ին-տ. Երևան, 2023, 320 էջ (ներդիր 8 էջ):*

## ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ<sup>1</sup>

Հետագայում, հասարակության զարգացման ավելի բարդ ստադիայում, երբ տարբեր, երբեմն իրարից բավականաչափ հեռու, տոհմերի ու ցեղերի, ինչպես և ամբողջ ժողովուրդների հաղորդակցությունն ու հարաբերություններն ավելի են աճում ու սերտանում, երբ նյութական բարիքների փոխանակության զուգընթաց փոխադարձաբար և հոգևոր կուլտուրան է մատչելի դառնում, այդ տեղական բնույթ կրող հոգևոր կուլտուրայի հուշարձանն էլ անցնում է հարևանից հարևանի մոտ և մերվում նոր միջավայրում, հարկավ, եթե նոր միջավայրում առկա են համապատասխան նախադրյալներ, հակառակ դեպքում հարազատ տեղականը «ի բաց թքանէ» խորթ եկվորին: Տեղական նախադրյալի առկայության դեպքում եկվոր հյուրը հարակցման կարգով (կոնտամինացիա) տեղայնանալով և միաձուլվելով հարազատի հետ՝ միանգամայն «ազգայնանում» է նոր հասարակության գոյին ու գիտակցության համեմատ: Սա ֆոլկլորային ստեղծագործության օրինաչափ պրոցեսներից մեկն է:

Կարապետ Մելիք-Սհանջանյան<sup>2</sup>

**Բանալի բառեր՝** Անի, Հայոց թագավոր, Թավամազ Օհան, Օդաբաշօղլու, Փավստոս Բուզանդ, Սբ. Ներսես, Ստեփանոս Օրբելյան, Հովհաննես Երզնկացի Պլուզ, Արշակ Բ, Գնել, Օ. Բելլի:

1970-ական թթ. Կարսի շրջանում թուրք բանահավաքների կողմից գրառվել և բանահյուսական ուսումնասիրությունների (TFA) շարքով հրատարակվել է Անի քաղաքի կործանման կամ Հայոց թագավոր Թավամազ Օհանի (Kilis Ohan) կամ Օհաննեսի մասին ավանդազրույցը<sup>3</sup>:

\* ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ԵՊՀ, ք.գ.թ., sramaz@mail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 2 փետրվարի, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ ապրիլի 15, 2023:

<sup>1</sup> Շնորհակալություն եմ հայտնում Գոհար Մուրադյանին և Արմեն Պետրոսյանին՝ կատարած դիտողությունների համար:

<sup>2</sup> Կ. Մելիք-Սհանջանյան, «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի», ՀՍՍՌ ԳԱ ՏՀԳ, թիվ 7, էջ 58-78, Երևան, 1947, էջ 75:

<sup>3</sup> «Ատասպել», նաև «Նեֆիաթ», Օ. Բելլիի անգլերեն հրատարակության մեջ՝ legend (O. Belli, Ani in Every Aspect, Istanbul, 2021, p. 241):

Նախնական հրատարակված տարբերակում Քավամազ Օհանը կերպավորվում է որպես Անիի տիրակալ և մուսուլմանների հակառակորդ, որն անգթորեն ճնշում է այլադավաններին, ոչնչացնում նվազագույն զանցանքի համար և սահմանել է «առաջին գիշերվա իրավունք»<sup>4</sup>: Դրա արդյունքում մուսուլմանները չեն ամուսնանում, սակայն նրանց մեծամեծներից Օղաբաշոզլուն (կամ Օղաբաշոզլուի որդին)<sup>5</sup>, բառացի՝ սենեկապետի որդին, փորձում է մինչև հոր վախճանը որևէ կերպ իրագործել իր ամուսնությունը: Այդ մասին տեղեկանում է Քավամազ Օհանը և շատանալով նորապսակ հարսին՝ հրամայում է անհնազանդ Օղաբաշոզլուն կախել քաղաքի հրապարակում: Վերջինս կախաղանի մոտ հղում է իր անեծքը. «է՛յ, Անի, խորտակվի՛ր այս հետապնդմամբ ապրելու փոխարեն, փլուզվի՛ր»: Հազիվ խոսքն ավարտած՝ քաղաքն անցնում է գետնի տակ, ինչով, ըստ էության, բացատրվում է Անիի ավերիչ երկրաշարժը: Ավանդազրույցը վերջանում է ընդհանուր բովանդակության հետ ընդհանրապես կապ չունեցող մասով (արդեն սուլթան Մուրադ Դ-ի ժամանակներում՝ 1623-1640 թթ.), որն առավել ընդգծում է այն սարսափի ու երկյուղի մթնոլորտը, որ Հայոց թագավորը թողել է անգամ Օղաբաշոզլուի հաջորդ սերունդների համար<sup>6</sup>:

Հատկանշական է, որ ի տարբերություն 1970-ական թթ. և հետագա ժամանակահատվածի՝ Կարսի շրջանում տարածված ավանդազրույցի վերջին հրատարակություններում Հայոց թագավորի անունն արդեն թրքացված ձևով է ներկայացվում, այն է՝ Քավամազ Օրհան (*Kıllı Orhan*): Ընդամին, ամբողջությամբ թրքացվում է նաև ավանդազրույցը՝ շնչելով հայկականության բոլոր հետքերը: Նմանապես այն տարբեր կերպ է վերնագրվում վերջին հրատարակություններում, օրինակ՝ «Անիի ավերակների առասպելը» (*Ani Harabeleri Efsanesi*) ևն:

Թերևս, որոշ բացառություն են կազմում թուրք հետազոտող, պրոֆ. Օքթայ Բելլիի վերջին ուսումնասիրությունները, որոնք հրատարակվել են թուրքերեն և անգլերեն լեզուներով: Դրանցից հայտնի են 2016 թ. ժողովածուի մեջ հրատարակված «Անի քաղաքի կործանման առասպելը» («Քավամազ Օհանի առասպել-

<sup>4</sup> C. Şıklı, “Ani’nin Yıkılış Efsanesi”, *Kars 2. Kent Kurultayı, Kafkasya’da Ortak Geleceğimiz*, T.C. Kars Belediyesi Kültür Yayınları, İstanbul, 2007, ss. 398-400.

<sup>5</sup> Ավանդազրույցի թուրք հերոսի անունը արձանագրվել է նաև «Օղաբաշոզլու» և «Օղաբաշոզլու» ձևերով (A. Yıldırım, *Selçuklu Devrinde Ani Şehri (1064 -1200)*, T.C. Sakarya Üniversitesi, Sosyal Bilimler Enstitüsü, Yüksek Lisans Tezi, Ekim-2010, s. 85): Թրք. odabaşı նշանակում է «սենեկապետ», «սենեկապան», «արհունի մանկավիթ», պատմականորեն՝ «օգնական» ենիչերիական գործում, իսկ արդի թուրքերենում առավելապես գործածական է «դոմապան» իմաստով:

<sup>6</sup> C. Şıklı, նշվ. աշխ. էջ 398-400:

լը»<sup>7</sup>), 2019 թ. հրատարակված «Անին բոլոր տեսակետներով» գրքույկը<sup>8</sup> և 2021 թ. հրատարակված դրա անգլերեն տարբերակը<sup>9</sup>:

Բելլին առավել մանրամասն ներկայացրել է ավանդազրույցի նախնական համառոտ տարբերակը՝ Հայոց թագավոր Թավամազ Օհանի հիշատակովյամբ: Նշվում է, թե Անիում սկզբնապես տիրել է Նուշիրևանը, հանձին որի նկատի է առնվում Իլխանյանների գահը 1344-1357 թթ. զբաղեցրած Անուշիրվան-խանը (անվանակոչվել է ի պատիվ Սասանյան արքա Խոսրով Ա Անուշիրվանի): Նուշիրևանից հետո քաղաքն անցնում է մուսուլմաններին, իսկ այնուհետև դրան տիրանում է մի հայ թագավոր, Թավամազ Օհան անվամբ (անգլերեն տարբերակով *Ohan the Hairy*), «հայտնի իր բռնակալությամբ ու դաժանությամբ»<sup>10</sup>: Գեղեցիկ և բարեկեցիկ Անին տուժում և ավերվում է Օհանի բռնակալության արդյունքում, ինչի համար «տեղաբնակ» ժողովուրդն աղաղակում է. «Ասա, Անի՛, ինչո՞ւ փոխարեն Նուշիրևանի նստեցրիր {առար} Թավամազ Օհանին»<sup>11</sup>: «Առաջին գիշերվա» իրավունքի պատճառով մուսուլմաններն իրենց աղջիկներին դուրս են ուղարկում, ընդհանրապես, երիտասարդներն սկսում են արտագաղթել, ինչի պատճառով Անին հետզհետե ամայանում է: Հաջորդաբար կրկնվում են վերը նշված զարգացումները, միևնույն անեծք-բանաձևը, շեշտվում է, թե Օղաբաշօղլուի անեծքը կիսում էին բոլոր բնակիչները, այդ պատճառով քաղաքն անմիջապես ավերվում է: Նշվում է նաև, որ բոլորն էլ ցանկանում էին մոռացուլթյան մատնել եղելությունը, ըստ այդմ, ոչ ոք չէր ուզում վերաբնակեցնել Անին<sup>12</sup>:

Օ. Բելլին առանց որևէ հիմնավորման Թավամազ Օհանին նույնացնում է 1199 թ. Անին ազատագրած հայ-վրացական բանակի հրամանատար (ամիրս-պասալար) Զաքարե Զաքարյանի կրտսեր եղբայր Իվանե Զաքարյանի (մահ. 1227 թ.) հետ՝ նկատի առնելով անվան նույնությունը և վերջինիս փաստացի տիրապետող լինելը<sup>13</sup>, թերևս, իրազեկ չլինելով, որ խոսքն ամեն դեպքում հայազգի իշխանավորի մասին է: Նշվում է, թե Իվանեի «դաժան վարչակազմը» քննադատվում էր թուրք-մուսուլմանական բնակչության կողմից, ինչը հիմք է

<sup>7</sup> O. Belli, “Ani Şehri'nin Yıkılış Efsanesi (Kıllı Ohan Efsanesi)”, *Uluslararası Ani-Kars Sempozyumu 14-16 Ağustos 2014*, Kafkas Üniversitesi, ss. 297-299, İstanbul, 2016.

<sup>8</sup> O. Belli, *Her Yönü ile Ani*, İstanbul, 2019 (այսուհետ՝ Belli 2019).

<sup>9</sup> O. Belli, *Ani in Every Aspect*, İstanbul, 2021, pp. 241-243 (այսուհետ՝ Belli 2021).

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 241:

<sup>11</sup> Թուրքերեն բնագրով “Söyle Ani nettin Nuşirevan’i yerine oturtun Kıllı Ohan’i” (Belli 2019, s. 284):

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 284-285:

<sup>13</sup> Belli 2021, p. 65.



դարձել «Աինչ այսօր պահպանված բազմաթիվ առասպելներ»<sup>14</sup>, թեև իրականում հայտնի է միայն քննարկվող տարբերակը: Բեյլիի համոզմամբ, Անիի և Կարսի տարածաշրջանում գրառված զրույցները սերնդեսերունդ բանավոր փոխանցվել և հասել են մինչ մեր օրերը<sup>15</sup>:

Ընդհանուր առմամբ, դիտարկումը հետաքրքիր է, սակայն, նախ, Իվանե Զաքարյանն ամեն դեպքում թագավոր կամ Անիի կառավարիչ չի եղել (կառավարիչը ավագ եղբայր Զաքարե Զաքարյանն էր), և, բացի այդ, նվագ հավանական է թվում նման ավանդազրույցի առաջացումը ԺԲ-ԺԳ դդ. և գոյություն պահպանումը մինչև Ի դ. կես: Առավել ևս, որ նկարագրվող պայմանները («առաջին գիշերվա իրավունք» ևն) իսպառ բացակայել են և անգամ բանահյուսական առումով որևէ նման հորինվածք լուրջ չի կարող ընդունվել:

Օ. Բեյլիին թվարկում է նաև այլ հանգամանքներ, որոնք, սակայն, որևէ կերպ չեն կարող առնչվել պատմական իրականությունը: Օրինակ, նշվում են 5 ասացվածք, որոնք, իբր, աղբյուրում են ավանդազրույցի հետ, սակայն իրականում ընդհանուր բնույթ են կրում, ինչպես, օրինակ. «Մեդյալը կարո՞ղ է հարություն առնել»<sup>16</sup>: Հիշատակվում է բառացի թարգմանված և, ըստ էության, թուրքական ներկայացված Անիի մասին հայկական հայտնի ասացվածքը. «Անին շեն՝ աշխարհն ավեր, աշխարհը շեն՝ Անին ավեր»<sup>17</sup>:

Որոշ թուրքական հրատարակություններում տվյալ ասացվածքները մտնում են Ուռում Փափայի մասին կարճ զրույցի մեջ, որն իր հերթին երբեմն եզրափակում է Թավամագ Օհանի ավանդազրույցը՝ մաս կազմելով դրան: Թրք. *Urum Papa*-ն բառացի կարելի է հասկանալ որպես «հույն քահանա (*papaz*)» կամ «Հոռմի պապ»<sup>18</sup>, և այս դեպքում բացարձակ դժվար է որևէ տրամաբանական կապ գտնել Անիի մասին ավանդազրույցի հետ: Նշվում է, թե Անիին մերձակա Ալաշայի լեռներում պառկած այս անձը յոթ տարին մեկ ուղղվում է և յոթ անհնար հարցումներին ժխտական պատասխան տալիս (ինչպես, օրինակ, «Մեդյալը կարո՞ղ է հարություն առնել», «Անին շենացն՞ է» ևն): Ըստ այդմ, Անին չի շենանում և մինչ աշխարհի վախճանը մարդկային դեմք չի տեսնի<sup>19</sup>: Ըստ էության, զրույցը հետագա արհեստական հավելում է, որն ուղղակի միտված է

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 66:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 226, 243:

<sup>16</sup> Belli 2019, s. 286.

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 285:

<sup>18</sup> Թրք. Rum կամ Urum նշանակել է «հույն»՝ «հոռմեացի», «Հոռմ» իմաստով (հմմտ. հայհոռոմներին օսմանյան մարդահամարների ժամանակ տրված Ermeni-Rum անվանումը): Yunan-ն ավելի ուշ ժամանակահատվածի փոխառություն է պարսկերենից և ներկայումս պաշտոնապես գործածվում է հույների վերաբերմամբ: Rum-ը գրականության մեջ առավել գործածական է Թուրքիայի (Օսմանյան կայսրության) հույների առնչությամբ, Rumca կամ Rumeika է անվանվում Պոնտոսի հույների բարբառը (հմմտ. հուն. Ρωμαϊκά/Ρωμέϊκα):

<sup>19</sup> Urum Papa'nın Yedi Olmaz İşine İlişkin Efsane (ըստ <http://www.karsmanset.com> կայքէջի):

առավել ընդգծել ավանդազրույցի էսքատոլոգիական (վախճանաբանական) բնույթը:

Քննվում է նաև Իլխանյան իշխանավորներից Անուշիրվանին նախորդած Սուլեյման-խանի (Սուլթան Սուլեյման շահ, 1339-1344 թթ.) բրոնզե դրամը, որը տեղաբնակների շրջանում հայտնի է որպես «կապիկի դրամ» (Maymun Sikkesi)՝ նկատի առնելով դրամին պատկերվածի թավամազ դեմքը: Օ. Բելլին այն անվարան նույնացնում է ավանդազրույցի հերոս Թավամազ Օհանի հետ<sup>20</sup>, ինչը միանգամայն հիմնադուրկ է:

Անհասկանալիորեն, ավանդազրույցի մեկնաբանություններում շեշտվում է Անիի պեղված կիսավեր շինությունների կարմիր գույնը՝ դրսևորելով տարածաշրջանում տուֆի լայն գործածության մասին անիրագեկությունը, ինչն էլ հերթական անգամ ի ցույց է դնում ընդամենը պեղումների արդյունքում շինությունների հայտնաբերումից հետո տեղում արմատավորված տարրի ոչ ավտոթթոն լինելը: Հրատարակության էջերում Անիի ավերակների լուսանկարները մեկնաբանվում են որպես «առասպելի համաձայն, Անի ֆաղափ՝ ամոթից կապ-կարմիր դարձած շինությունների ֆաբեր»<sup>21</sup>:

Միևնույն հրատարակության մեջ ավանդազրույցին կցվել է 4 էջանոց մի երկարաշունչ բանաստեղծություն (*mesnevisi*), որը չափածոյով ներկայացնում է դրա բովանդակությունը<sup>22</sup>, ստեղծելով տպավորություն, թե այն պատմական արժեք ունեցող ինչ-որ թուրք աշուղի ստեղծագործություն է: Իրականում, «Սագրք Միսքինի» աշուղանման կեղծանվամբ հեղինակը 1964 թ. Կաղզվանում ծնված ծագումով քուրդ Սաիթ Քյուչուքն է, ըստ այդմ, ժամանակակից չափածոյի հրատարակությունը պատմական բնույթի ուսումնասիրության մեջ միանգամայն անհարկի է:

Կարելի է ենթադրել, թե Թավամազ Օհանի կերպարի նախատիպը Բագրատունյաց թագավոր Հովհաննես-Սմբատ կամ Սմբատ Գ-ն է, որն իշխել է 1020 թ.-ից մինչև 1041 թ.: Տեսականորեն կարելի է նկատի առնել ԺԴ դ. առաջին կեսի Անիի կառավարիչներից Հովհաննեսին, որի անունը («Յովաննէս») ձևով հիշատակվում է քաղաքի վերաշինման և հարկերի թեթևացման մասին մի արձանագրության մեջ<sup>23</sup>: Սակայն տիպաբանական վերլուծությամբ նման ենթադրությունները բացառվում են, քանի որ «ավանդազրույցն» ամբողջությամբ շինծու է թվում, զուրկ որևէ իրական բանահյուսական արժեքից, ընդամին, հայերին են վերագրվում սեփական արատավոր բարքերը և նվաճված ժողովուրդների հան-

<sup>20</sup> Belli 2019, ss. 226-227: Վերոհիշյալն Իլխանյանների դրամներից հայտնի միակ անհոննի և թավամազ դեմքը չէ, օրինակ, նույն կերպ էր պատկերվում անգամ արևը, Աբու Սաիդ Բահադուրի (1316-1335 թթ.) դրամի դիմերեսի «առյուծ արև» («շիր խորշիղ») զինանշանից:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 286, 290:

<sup>22</sup> Նույն տեղում (“*Ani'nin Yikiliş Efsanesi Mesnevisi*”), էջ 287-290:

<sup>23</sup> Կ. Մաքևոյան, *Անին և անեցիները*, Երևան, 2021, էջ 400:

դեպ վերաբերմունքը, ինչը բնորոշ է եղել օսմանյան ժամանակահատվածին<sup>24</sup>: Հետագա արհեստական հավելում է թվում նաև Նուշիրևան-Անուշիրվանի մասին հիշատակությունն ավանդազրույցում:

Ըստ էության, ավանդազրույցում պահպանվել է Անիի ավերիչ երկրաշարժների մասին վերհուշը: Միաժամանակ անմիջապես աչքի է զարնում Անիի անեծքի մասին ավանդազրույցի օտարամուտ և, ընդհանրապես, թուրք բանահյուսությանը ոչ բնորոշ լինելու հանգամանքը:

Թերևս, որոշ բացառություն կարող է կազմել ԺՁ դ. օսմանյան պատմագիր Էվլիյա Չելեբիի ուղեգրության («Սեյահեթ-նամե») մեջ պահպանված Վանա լճի առաջացման մասին ավանդազրույցը, ինչի համաձայն, Նեմրուժը (Բեյ-Նեբրովթ) քառասուն տարի շարունակ լճի շուրջ ամրոց է կառուցում, ապստամբում Աստծո և Աբրահամի դեմ: Աստծո հրամանով Գաբրիել հրեշտակը հարվածում է լեռանը, վերացնում դրա վրա եղած շինությունները, իսկ լեռը խորասուզվելով անդունդն՝ առաջացնում է Վանա լիճը<sup>25</sup>: Այնուամենայնիվ, տվյալ զրույցը նոր տարբերակն է ավելի վաղ՝ մինչ օսմանյան նվաճումները Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած սյուժեի, ըստ այդմ, այն ևս որպես թյուրքական բանահյուսության նմուշ չի կարող ներկայանալ: Բացի այդ, ակնհայտ է Աստվածաշնչի ազդեցությունը<sup>26</sup>:

Ընդհանրապես, հայ պատմագրության և բանահյուսության մեջ առկա են օրինակներ, երբ անեծքի և նզովքի արդյունքում կործանվում է որևէ բնակավայր: Թվենք դրանցից հայտնիները.

- 355 (358) թ. Արշակավան քաղաքի կործանումը Սբ. Ներսես Ա կաթողիկոսի անեծքի արդյունքում,
- 735 թ. Եղեգյաց գավառի Մոզ (Մոզն) ավանի կործանումը երկրաշարժից, Ստեփանոս եպիսկոպոս Սյունեցու անեծքով,
- 1319 թ. Անի քաղաքի կործանումը երկրաշարժից Հովհաննես վարդապետ Երզնկացու անեծքով,
- 1605 թ. սովահարությունը Ղրիմի Կաֆա (Թեոդոսիա) քաղաքում՝ Գրիգոր վարդապետ Դարանաղցու անեծք-բանադրանքի հետևանքով:

<sup>24</sup> Չի բացառվում, որ հակահայ գունավորմամբ հորինվածը գրավել է Կարսի շրջանում «հայերի դաժանությունները» վերապրածներից:

<sup>25</sup> Թուրքական աղբյուրներ, հ. 9: Էվլիյա Չելեբի (Օտար աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին 4): Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 208-209:

<sup>26</sup> Ս. Ահյան, «Հնդեվրոպական առասպելաբանության մոտիվների արտացոլումը հայկական ավանդության մեջ», ՊԲՀ, 1-2 (147-148), էջ 189-196, 1998, էջ 194: Ա. Պետրոսյանի կարծիքով, տվյալ առասպելը հնդեվրոպական չէ, այլ տարածաշրջանային՝ Հայաստան, Փոֆր Ասիա, Բալկաններ, Իտալիա (Ա. Պետրոսյան, Հայկական էպոսի հնագույն ակունքները-2, Երևան, 2020, էջ 79-80, 134-135):

Հնարավոր պատճառահետևանքային կապի և ընդհանրությունների բացահայտման նպատակով հերթով քննենք վերոհիշյալ օրինակները:

### Արշակավանի կործանումը

Արշակավանի պարագայում, նախ, հարկ է նշել, որ Արշակ Բ-ն, ըստ ամենայնի, այն նախատեսում էր վերածել մայրաքաղաքի: Արքունի հրամանը բնավվելու ցանկություն ունեցողներին մեծ արտոնություններ էր տալիս, ըստ այդմ, դրանից, առաջին հերթին, օգտվում են քրեական և անբարո տարրերը<sup>27</sup>: Ի տարբերություն Մովսես հորենացու հաղորդման, թե Արշակավանը ոչնչացվել է ապստամբ նախարարների կողմից, որոնց օժանդակել է պարսից Շապուհ արքան, Փավստոս Բուզանդը վկայում է քաղաքի (գյուղաքաղաքի) դատարկման մասին՝ որպես պատիժ առաքված համաճարակի արդյունքում: Բուզանդի վկայությամբ, Արշակ Բ-ին քաղաքի համար, նախ, հանդիմանում է Ներսես Ա կաթողիկոսը (Սբ. Ներսես), «զի անօրէնութեամբ և շարութեամբ և յափշտակութեամբ շինեցաւ բազում մեղօք»<sup>28</sup>: Կաթողիկոսը պատմում է «Հայոց կորստական աշխարհի» գալիք կործանման իր տեսիլքը, հորդորում քակել քաղաքը, ցրել ժողովված մարդկանց, ապաշխարել և արդարությունը շինել որևէ նոր քաղաք, սակայն ապարդյուն: Հատկանշական է Սողոմ քաղաքի բնակիչների գործած մեղքերի համեմատությունն Արշակ Բ-ին ուղղված խոսքում. «...և սկսար անօրինել առաջի Տեառն Աստուծոյ քո, և զամբարշտութիւնս և զանօրէնութիւնս և զանիրաւութիւնս կարի նմանութիւն սողումացոցն»<sup>29</sup>: Դրանից հետո կաթողիկոսը վկայակոչում է Սբ. Գրքի այն հատվածները, որոնք կարող էին վերաբերվել անօրեն շինված որևէ բնակավայրի և անարդարությամբ շահված սեփականությունը. «Վայ որ շինէ զտուն իւր՝ և ոչ արդարութեամբ, և վերնաշարկա իւր՝ և ոչ իրաւամբ»<sup>30</sup>: Ի տես թագավորի անհողդողդ կեցվածքի՝ կաթողիկոսն իր խոսքը եզրափակում է հետևյալ կերպ. «Յառակ առցին ողբն, և ասացեն՝ եթէ վայ որ ազահեսցէ զազահութիւն անձին իւրում, որ ոչ է իւր. զի եթէ տուն՝ գեղեցիկ իցեն և մեծամեծ՝ իցեն, սակայն յաւեր դարձցին. զի մի՛ ոք բնակիցէ՝ ի նոսա մարդ, այլ ճարակ հօտից լիցի, և դադարձ գազանաց և որջ՝ գազանաց և որջ՝ բորենից և ճագարաց և աղուեսուց, բոյն խորոց և ագռաւուց, և անո՞ք սահմանակցաց. վասն այդորիկ ատերեսցին գործ՝ ձեռաց քոց և մի՛ շինեսցին, և միանգամայն սատակեսցին ամենայն անօրէնքն բնակեալն՝ ի նմա. և եղիցին դադարձ եզանց և ճարակ՝ ցոց, և աղուէս՝ մուս

<sup>27</sup> Հայոց պատմություն, հ. II, Միջին դարեր (IV դարի սկիզբ - IX դարի կես), Երևան, 2018, էջ 86:

<sup>28</sup> Փավստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 174:

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 176:

և ելս խաղասցեն յարկս նոցին. և մի՛ շինեսցին, և մի՛ ևս բնակեսցեն, մինչև զյալիտեան»<sup>31</sup>:

Սա արդեն դասական նզովքի օրինակ է որևէ խրատ ու հանդիմանություն չընդունող իշխանավորի ենթակայության ներքո եղած և մեղքերի մեջ թաթախված քաղաքի համար: Բուզանդի հաղորդմամբ, Սբ. Ներսեսի խոսքերից երեք օր անց Արշակավանը հարվածների է մատնվում, մասնավորապես, մարդկանց և անասունների վրա տարածվում են վատորակ պալարներ, սկսվում է մի աննախադեպ ժանտախտ: Ընդ որում, սա Հայաստանում ժանտախտի առաջին հիշատակությունն է, ըստ Ստ. Մալխասյանցի<sup>32</sup>: Երեք օրում քաղաքը դատարկվում է մարդկանցից, մոտ քսան հազար ընտանիք կոտորվում է համաճարակի արդյունքում<sup>33</sup>:

Հարկ է նշել, որ վերոհիշյալը Բուզանդի հիշատակած ժանտախտի միակ դեպքը չէ: Մեկ այլ ժանտախտի դեպք, որպես Աստծո պատուհաս, Բուզանդը մանրամասն հիշատակում է Արտագերս ամրոցում, պարսից պաշարման 14-րդ ամսում, ինչի արդյունքում մոտ մեկ ամսում մահանում է ընդհանուր 17 հազար մարդ (11 հազար տղամարդ, 6 հազար կին)<sup>34</sup>:

Հետաքրքիր է, որ Արշակավանի կործանումը 358 թ. օգոստոսին Փոքր Ասիայում և Պոնտոսում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետ ժամանակին փորձել է կապել անվանի հայագետ Յոզեֆ Մարկվարտը<sup>35</sup>:

Փաստացի բուն դեպքերից ավելի ուշ ժամանակահատվածում արձանագրված հորենացու հաղորդումն ամբողջությամբ ծածկել է Բուզանդի վկայությունը: Ի դ. սկզբից արձանագրված մոտեցումների արդյունքում նախապատվությունը միանշանակ տրվել է հորենացու վարկածին և Արշակավանի կործանման պատմության շարադրանքն իրականացվել է առանց Բուզանդի վկայության:

### Մոզի կործանումը

Մոզ ավանի կործանման մասին հայտնում է ԺԳ դ. պատմիչ Ստեփանոս եպիսկոպոս Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» երկում՝ այն կապակցելով Այունյաց մետրոպոլիտ Ստեփանոս եպիսկոպոսի եղբրական սպանության հետ: Եպիսկոպոսը երիցս հանդիմանում և զգուշացնում է ավանի մի բնակչուհու, որն անբարոյական կյանք էր վարում, սակայն վերջինս չի զղջում և

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> **Փավստոս Բուզանդ**, Պատմություն հայոց, քաղցամայությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 324:

<sup>33</sup> Փառատոսի Բիզանդացուց Պատմութիւն Հայոց, էջ 176:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 264:

<sup>35</sup> Հայոց պատմություն, հտ. II, էջ 87:

ապաշխարում, ինչից հետո եպիսկոպոսը պատժի վճիռ է կայացնում («վնիռ հատեալ մեծ պատուհասի»)՝<sup>36</sup>։ Ավագ ակն տեղանքում եպիսկոպոսին, վրանում քնած ժամանակ, տվյալ կինն իր հոմանի գործակցի հետ դարանակալում և անձամբ սպանում է։ Աստծուն ուղղված խոսքում եպիսկոպոսն ասում է. «Քո՛ է վրէժխնդրութիւն և արդար իրաւունք»<sup>37</sup>։ Դրան հետևում է 40 օր տևած սաստիկ երկրաշարժը, ինչի արդյունքում 10 հազար մարդ ողջ-ողջ թաղվում է գետնի տակ, անդունդներից լավում են «վա՛յ ձոր, վա՛յ ձոր» աղաղակներն, ըստ այդմ, գավառը կոչվում է Վայոց ձոր<sup>38</sup>։

Միևնույն պատմությունը կրկնվում է ԺԳ դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու երկում։ Ընդ որում, Ստեփանոս եպիսկոպոսն, ըստ Գանձակեցու, սպանվում է Մոզն գավառի պոռնիկ կանանց ձեռքով<sup>39</sup>։ Նկարագրվում է նոյ մենակյացի տեսիլքը, որում սպանված եպիսկոպոսը դիմում է Աստծուն. «Տես, Տէր, զայս, զի Քո են դատաստանք արդար»<sup>40</sup>։

Միևնույն բովանդակությամբ մի գրույց Վայոց ձորում գրառվել է բանահավաք Երվանդ Լալայանի կողմից, ինչը հիմնական գծերով զարմանալիորեն կրկնում է Ստ. Օրբելյանի ավանդած պատմությունը։ Եպիսկոպոսի թշնամին Թանահատ գյուղից մի տղամարդ է, որը սիրահարված է իր սանամոր քրոջը, ինչն արդեն եկեղեցու սահմանած կանոնների խախտում է և, ըստ էության, անբարոյականություն, մեղք։ Ընդամին, այս կերպ, իբր, որոշակիորեն մեղմացվել է անբարոյական կնոջ կերպարը, որն առկա է Օրբելյանի երկում։ «Սիրահարները» երկու անգամ ամուսնության թույլտվություն են խնդրում եպիսկոպոսից, սակայն վերջինս բոլոր դեպքերում մերժում է։ Հետագա դեպքերը զարգանում են միևնույն կերպ, կնոջ կողմից դաշունահարված եպիսկոպոսն արթնանալով՝ բացականչում է. «Վա՛յ, ձոր, քառ մաղվես, մեջիդ շուն բնակվի»<sup>41</sup>։ Նման անեծք-բանաձևից հետո երկնքից իսկույն քար է թափվում և կործանում Մոզը, հուլիս ամսին էլ ձյուն է գալիս և կոտորում անասուններին, վերջում թուրքեր են գալիս և բնակվում ձորի մեջ՝ այդ կերպ պատճառ դառնալով գավառի անվանափոխությանը<sup>42</sup>։

<sup>36</sup> Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական։ Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 183։

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 185։

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 185-186։

<sup>39</sup> Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմութիւն, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 72-74։

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 74։

<sup>41</sup> Ե. Լալայան, Երկեր։ Վեց հատորով, հ. 4, Երևան, 2021, էջ 495։ Լալայանի նշած սույն անեծք-բանաձևը փոքր-ինչ այլ կերպ է արձանագրված Ա. Ղանալանյանի մոտ. «Վա՛յ ձոր, վա՛յ ձոր, քար մաղվես դու» (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 147)։ Այդ կերպ, ԽՍՀՄ օրոք գերիշաղ գաղափարախոսության դրույթների համաձայն, զեղչվել է թուրքերին, իմա՝ տեղաբնակ աղբբեռանցիներին վերաբերող շների հատվածը։

<sup>42</sup> Ե. Լալայան, նշվ. աշխ. էջ 495։

Վայոց ձոր տեղանվան առաջացման մի զրույց 1956 թ. գրի է առել բանահավաք Սարգիս Հարությունյանը, ինչն, անշուշտ, բովանդակային առումով տարբեր է, սակայն հիմքում դարձյալ ընկած է բնական տարերային աղետի պատմությունը<sup>43</sup>:

### Անիի կործանումը

Մինչ 1319 թ. կործանարար երկրաշարժն Անին ասպատակվել է օտար նվաճողների կողմից՝ ավերի ու ավարի ենթարկվելով, ինչը ժամանակի հայ պատմիչներն ընկալել են որպես Աստծո պատիժ, անեցիների մեղսալից կենցաղի հետևանք: Մասնավորապես, ԺԱ դ. պատմիչ Արիստակես Լաստիվերցին նկարագրելով տիեզերահուշակ քաղաքի գրավումը 1064 թ. Ալփ-Ասլանի սելջուկյան զորքերի կողմից՝ այն գնահատում է որպես Տիրոջ բարկության արդյունք, շեշտում, թե դա է բաժինն անիրավ քաղաքների<sup>44</sup>: ԺԲ դ. պատմիչ Սամուել Անեցին և այլ մատենագիրներ ևս քաղաքի գրավումն ու դրան հաջորդած դաժանությունները համարում են երկնային պատուհաս<sup>45</sup>: 1236 թ. Անին գրավում է Չարմաղանի գլխավորած մոնղոլական զորքը և քաղաքն ու շրջակայքը կրկին ենթարկվում են դաժան կոտորածի ու գերեվարության, ինչը Կիրակոս Գանձակեցին գնահատում է որպես անեցիների ամբարտավանության արդյունք. «Եւ յոյժ փարթամ էր ֆաղաֆն ամենայն իրօք, վասն որոյ յղփոսքիւնն յամբարտաւանութիւնն ած գնոսա, և ամբարտաւանութիւնն՝ ի կորուստ, որպէս սովոր է առնել ի սկզբանց և այսր»<sup>46</sup>:

Անիի վերջնական կործանման մասին զրույցի հիմքը ԺԳ դ. հայ մատենագիր, փիլիսոփա և տաղերգու Հովհաննես վարդապետ Երզնկացու (Պլուզ, 1230-1293 թթ.)<sup>47</sup> կողմից Անին նզովելու մասին ավանդությունն է, որը պահպանվել է Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսի (ծն. թ. անհտ. - 1737 թ.) 1734 թ. գրված «Պատմութիւն Անի ֆաղափին» երկում<sup>48</sup>, ինչպես նաև 1735 թ. Կ. Պոլսում հրա-

<sup>43</sup> Ա. Ղանայանյան, նշվ. աշխ. էջ 147:

<sup>44</sup> Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, խմբ.՝ Ա. Աբրահամյան, Երևան, 1971, էջ 101:

<sup>45</sup> Սամուել Անեցի և շարունակողներ, ժամանակագրություն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 187:

<sup>46</sup> Կիրակոս Գանձակեցի, էջ 258:

<sup>47</sup> Չփոթել ԺԳ-ԺԴ դդ. փիլիսոփա և ֆեռական Հովհաննես վարդապետ Երզնկացի Ծործորեցու (մոտ 1270 – 1338 թթ.) հետ: Գեոևս Մ. Չամչյանից առաջ եկած շիրոփի արդյունքում տվյալ երկու եկեղեցական գործիչներ միաձուլվել են (Հովհաննես Երզնկացի-Պլուզ-Ծործորեցի), ինչը հետագայում կրկնել են այլ հայագետներ (Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 271-274):

<sup>48</sup> Նշված համառոտ գրությունը հրատարակվել է Կրետացու «Պատմագրություն անցիցն իւրոց եւ նատր-Շահին պարսից» հիմնական աշխատությանը կից, առաջին անգամ՝ 1796 թ., Կալկաթայում, իսկ այնուհետև՝ 1870 թ., Վաղարշապատում: Ամբողջական վերնագիրը՝ «Պատմութիւն Անի քաղաքին զոր գրեալ է Աբրահամու բարոնապետի եւ Բանի սպասաւորի եւ Առաջնոր-

տարակված Ղազար Ա Ջահկեցի կաթողիկոսի (Ճահկեցի, ծն. թ. անհտ. - 1751 թ.) «Գիրք Աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի» երկում<sup>49</sup>: Համարվում է, որ տվյալ ժամանակահատվածում Ջմյուննիայի հոգևոր առաջնորդ եղած Ջահկեցին Կրետացու գրվածքի մի մասն ուղղակի զետեղել և հրատարակել է իր երկում՝ հիմնականում համառոտ կրկնելով մեջբերված ավանդույթները:

Բոլոր դեպքերում էլ մանրամասն նկարագրվում է այն զեխ և ցոփ կենսակերպը, որն արմատավորվել էր անեցիների շրջանում: Կրետացին թվարկում է նրանց մահացու մեղքերը՝ հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ագահություն (արծաթասիրություն), որկրամոլություն, ի վերջո, «անյիշելի պոռնկություն, մանաւանդ ազգապղծութիւն»<sup>50</sup>: Պատմիչը մանրամասն օրինակներ է բերում անեցիների մեղսալից բարքերից, իսկ վերջին դեպքում հիմնականում նկատի է առնվում արյունապղծությունը (incest), քանի որ անեցիները հին սովորության համաձայն, գույքի և սեփականության ժառանգության համար իրենց զավակներին օտարի հետ չէին ամուսնացնում, այլ մերձավորների: Ընդհանրապես, հինկտակարանյան հրեաների նման, անեցիները ևս վստահ էին, թե որոշ «պայմանավորվածություն» ունեն Աստծո հետ, և հպարտանում էին իրենց կառուցած 1001 եկեղեցիներով, դրանց նվիրաբերած ձիթհանքներով ու այգիներով<sup>51</sup>:

Ահա այս պայմաններում Սբ. Հոգու ազդմամբ Անի է գալիս Հովհաննես Երզնկացին, հայտնի «Պլուզ» (կարճահասակ) մականվամբ, փորձելով դարձի բերել անեցիներին «՚ի մուրուրեմէ և ՚ի շար գործոց իւրեանց»<sup>52</sup>, սակայն հենց առաջին իսկ օրը պատշաճ ընդունելության չի արժանանում օտարատյաց անեցիներից և գիշերում է մի հետին խցում: Հարբեցողությամբ ու զեխությամբ տարված անեցիները փորձում են ծաղրել վարդապետին նրա կարճահասակության պատճառով: Ի հակառակ դրա՝ վարդապետը գիշեր ու ցերեկ խրատում է անեցիներին, «և նո՛ւա ոչ անսայիմ բնաւ և ոչ դարձան ՚ի մեղաց»<sup>53</sup>: Պատահանները երկար սպասեցնել չեն տալիս, և աներևույթ ուժերի կողմից խոցոտվում են բազում մանուկներ՝ մայրերի գրկում, մահճում, արթուն կամ քնի մեջ,

գին թրակիոյ» (Պատմագրութիւն անցիցն իւրոց և նատր Շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 101-109):

<sup>49</sup> Ղազար Ճահկեցի, Գիրք Աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 628-634:

<sup>50</sup> Պատմութիւն Անի քաղաքին զոր գրեալ է Աբրահամու բարունապետի եւ Բանի սպասաւորի եւ Առաջնորդին թրակիոյ, էջ 102-103:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 105:

<sup>53</sup> Նույն տեղում:



ինչից հետո անեցիները վարդապետին բանտարկում են «՚ի նսեմ և ՚ի ժահահուտ տեղի մի»<sup>54</sup>, հարկադրում «հաշտության» պատարագ մատուցել: Եկեղեցում խնկարկման ժամանակ բուրվառից հուր է ելնում և այրում ԴՃ (410) տղամարդու, ինչպես հինկտակարանյան Ահարոնի որդիներ Նաբաթին և Աբիութին, ինչից սարսափած անեցիները զղջում և թողություն են հայցում վարդապետից, «և խոստանային դառնալ ՚ի մեղաց ըստ ամենայնի»<sup>55</sup>: Սակայն, ինչպես հինկտակարանյան հրեաները, սակավ օրեր անց կրկին սկսում են շարիք գործել և թավալվել իրենց պղծության ախտերի մեջ: Այդժամ Տիրոջ բարկությանը հայտնվում են գիշերային գազանների երամակներ (գալլեր), որոնք պատառոտում են անեցիների պատանյակներին ու մանուկներին, այդ թվում՝ մի կնոջ միամոր որդու: Կինն օգնություն է աղերսում վարդապետից, որը տեսնելով նրա հավատն՝ աղոթում է Աստծուն, ինչից հետո հայտնվում են գազանները և բերում իրենց պատառոտած մարմնի անդամները: Վարդապետի աղոթքով անդամները միանում են և մանուկը հարություն է առնում, ինչից հետո անեցիները բերում են իրենց հարազատների դիակները և միևնույնը խնդրում: Երզնկացին կրկին աղոթք է հղում առ Աստված՝ խնդրելով հարություն տալ նրանց, որոնք անմեղ են, իսկ մեղավորներին՝ պատժել, ինչից հետո գալլերը դառնում և կրկին պատառոտում են: Անեցիներն ապշում և մեղա են գալիս, սակայն «յետ երից ամսոց մոռացան զառաջին հարուածն... Եւ սկսան կրկին ՚ի մեղս թաւալիլ»<sup>56</sup>, առաջին հարվածները վերագրելով պատահականությանը:

Երզնկացին կրկին սկսում է քարոզել, իսկ անեցիներն առավել շարանում և թմրադեղ տալով վարդապետին՝ մերկացնում են նրան, սալով պտտում քաղաքով մեկ և նվաստացուցիչ ծաղրուծանակի ենթարկում: Ի վերջո, նրան բրածեծ են անում և հեռացնում քաղաքից՝ պատվիրելով այլևս չմտնել Անի: Վարդապետը բարձրանում է մի բլրի վրա և անիծում քաղաքը՝ դիմելով Տիրոջը, թե «այլ ո՛չ լինիմ երաշխաւոր. այսուհետև զոր ինչ կամիս՝ ա՛յնպէս արա»<sup>57</sup>: Աստծո բարկությունից քաղաքն սկսում է շարժվել, տապալվում են պարիսպները, իսկ բնակիչները թողնելով իրենց տները, եկեղեցիները և պալատները՝ ցիրուցան են լինում և լքում Անին: Վերջում պատմիչը նշում է անեցիների գաղթականության բազմազան ուղիները՝ Զուղա, Կասպից ծովի եզերք, Վան, Սիս, Կաֆա ևն<sup>58</sup>:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 106:

<sup>55</sup> Նույն տեղում:

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>57</sup> Նույն տեղում:

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 108-109:

### Կաֆայի կործանումը

1605 թ. Ղրիմի Կաֆա քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների մասին հայտնում է ժե դ. պատմիչ Գրիգոր վարդապետ Դարանաղցին «Ժամանակագրություն» մեջ: Իր աշակերտ Սիմեոն աբեղայի հետ իջևանելով Կաֆայի հայոց եկեղեցու ժամատանը՝ վարդապետը պատշաճ ընդունելություն տեղի հայ համայնքի, իմա՝ անեցիների ժառանգների կողմից չի ունենում (ինչպես Հովհաննես Երզնկացին Անիում), այլ հակառակը՝ տեղի քահանաների և Սարու Սաֆար անվամբ իշխանավորի կողմից ենթարկվում է անարգանքի, իսկ Սիմեոնը բրածեծ է արվում: Ի վերջո, երկուսն էլ ժամատանից դուրս են հանվում, հեռանում ծանոթ այլ հայերի օգնությամբ<sup>59</sup>: Դարանաղցին բանադրանքի երկու գիր է ուղարկում Կաֆա, «զմինն՝ պատմաբանութեամբ յանդիմանական զանկատ ընդհանուր եկեղեցականացն եւ ժողովրդոցն եւ մին կոնդակն՝ այն Սարու Սէֆար {Սաֆար} ասածին, յանէծս ցաւագին եւ սաստ բանադրանաց ի վերայ նոցա ըստ արժանեացն»<sup>60</sup>: Չղջման փոխարեն կաֆացիների առաջնորդները նույնիսկ փորձում են վարկաբեկել վարդապետին և համապատասխան գրություն են առաքում մյուս համայնքների: Ի վերջո, լուր է հասնում Կաֆայում եկեղեցու հրդեհի և աննախադեպ սովահարության մասին, ինչի արդյունքում շատ հայերի ընտանիքներ հակադրված արտագաղթում են այլ երկրներ, իսկ նշված Սաֆարը խողխողվում է մերձավորների հետ: Աղետները սեփական բանադրանքների երկնառաք պատուհաս համարելով Դարանաղցին խղճահարվում, գրում է արձակման թուղթ («գիր արձակմանց») և իրավունք տալիս Հակոբ վարդապետին բանադրվածների զղջման դեպքում իր անունից արձակել նրանց անեծքի կապանքներից, ինչը հետագայում կատարվում է<sup>61</sup>:

Հատկանշական է, որ կաֆացիների ամբարտավանության առնչությամբ իր երկում Դարանաղցին մեջբերում է Քրիստոսի պատվիրանն իր աշակերտներին. «Յորժամ յոր քաղաք որ մտանիցեք եւ որք ոչ ընդունիցին զձեզ եւ ոչ լուիցեն բանից ձերոց, յորժամ ելանիցեք ի քաղաքն, թոթափեսջի՛ գփոշի ոտից ձերոց»<sup>62</sup>:

\* \* \*

Այսպիսով, թվարկված բոլոր օրինակներում անեծքի և նզովքի հեղինակները բարձրաստիճան հոգևորականներ են, իսկ երեք դեպքում պատճառն անբարոյականության մահացու մեղքն է: Պատճառահետևանքային կապը հստակ

<sup>59</sup> Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, հրատարակեց Մեսրոպ վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 59-66:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 67:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 94-97:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 67: Տե՛ս Մատթ. Ժ 11-14:

դիտարկվում է բոլոր դեպքերում էլ: Բնակավայրերի ղեկավարները կամ բուն բնակչությունը, որպես կանոն, վաղորոք զգուշացվում են, հորդոր կամ հանդիմանություն ստանում զղջման և ապաշխարություն, սակայն ժամանակավոր դադարից հետո կրկին դառնում են իրենց մեղսավոր կենցաղին: Անեցիների շառավիղներին, իմա՝ Կաֆայի հայերին պատիժը հետևում է նույնիսկ օտարություն մեջ, սակայն, ի վերջո, նրանց մի մասը զղջում է, արձակման գիր ստանում և պատուհասները դադարում են:

Ակնհայտ է, որ թուրքական ավանդազրույցի հիմքում իրապես ընկած է Հովհաննես Երզնկացու անեծքի արդյունքում երկրաշարժից Անիի կործանման մասին ավանդությունը: Այն հետագա դարերում էլ այնքան կենսունակ էր, որ հիշատակվում է նույնիսկ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում: Գլխավոր հերոս Աղասիի և նրա ուղեկիցների՝ Անիում գիշերելու մտադրության մասին խոսելով՝ Աբովյանը նշում է, թե «սնապաշտոնյունն ու սուրբ Հովհան Երզնկացվո անեծքի սուրը էնպես էին նրանց սրտումը ցցվել, որ հազար ֆարոզ ու ֆյալփաթին ըլեւ, չէր կարող հանել»<sup>63</sup>: Հատկանշական են նաև Անիից դուրս գալուց հետո Աղասիի երգի հետևյալ տողերը.

Թո՛ղ էն անեծքը, որ ֆեզ են ավել,  
Բանան անդունդը, կույ տան ինձ սաղ էլ.  
Քո հողն երեսիս մտնիմ գետնի տակն էլ,  
Երկնային լսին էլ ես չե՛մ կարոտիլ:

Սուրբ Երզնկացի, սուրբ Երզնկացի,  
Պարծեցի՛ր, թե ես չեմ շինիլ Անի.  
Անեծքդ էն վախառ թրի, կայծակի  
Պես թո՛ղ ինձ էրեն, իմ հոգիս տանջվի<sup>64</sup>:

1830 թ. հրատարակված ուղեգրության հեղինակ բանասեր և պատմաբան Մինաս Բժշկյանցի (1777-1851 թթ.) վկայություններ, միևնույն ավանդությունն իրեն պատմել են անեցիների ժառանգ լեհահայերը. «...հոշակաւոր մայրաքաղաքն Անի դորդեալ կործանեցաւ բոլորովին. որ ըստ պատմութեան Զահկեցոյն՝ պատահեցաւ յաւէտ անիծիւմ Յովհաննու քահանային երզնկացոյ. որպէս և Անեցիք աւանդութեամբ պատմեցին մեզ»<sup>65</sup>:

Միանշանակ է, որ Հովհաննես Երզնկացու անեծքի արդյունքում երկրաշարժից Անիի կործանման ավանդությունը հայության շրջանում հայտնի էր նույն-

<sup>63</sup> Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, խմբ. Պ. Հակոբյան, ԵՊՀ, Երևան, 1981, էջ 276:

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 280:

<sup>65</sup> Մ. Բժշկեանց, Ճանապարհորդութիւն 'ի Ահաստան և յայլ կողմանս բնակեալս 'ի Հայկազանց սերելոց 'ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 67:

նիսկ *ԺԹ-ի* դդ.<sup>66</sup>: Նման պայմաններում «անիծյալ քաղաքի» ավանդույթունն ուղղակի չէր կարող չփոխանցվել տեղաբնակ օտարազգիներին, տվյալ դեպքում՝ Կարսի շրջանում բնակված թուրքերին և, ընդհանրապես, մուսուլմաններին, որոնք էլ հետագայում յուրովսանն պետք է մեկնաբանեին այն:

Հարկ է նշել, որ Կարսի շրջանում տարածված հայկական հեքիաթներում ակնառու է, ընդհանրապես, անեծքի ժանրի առկայությունը<sup>67</sup>: Առանձնացվում են անեծքների տիպեր՝ անիծում է մեկը՝ օրինակ պառավ, դերվիշ, որին ինչ-որ վնաս է հասցվել կամ ոտնահարվել են նրա իրավունքները<sup>68</sup>:

Միաժամանակ զրույցի առավել մանրազնին քննույթյունը բերում է համոզման, որ դրանում տեղ են գտել նաև «Պարսից պատերազմ» հերոսավեպի (Արշակ Բ վեպ) բնորոշ տարրեր: Ընդհանրապես, անժխտելի է, որ Փավստոս Բուզանդն առավել օգտվել է ավանդական վեպից, երգերից ու զրույցներից<sup>69</sup>, և նրա երկում գերիշխում է վիպական տարրը<sup>70</sup>:

Նախ, որոշ հետաքրքրույթյուն կարող է ներկայացնել այն հանգամանքը, որ հերոսավեպում արգեն իսկ վկայված է «Թավամազ թագավորի» կերպարը: Բուզանդի հաղորդմամբ, Արշակ Բ թագավորին այդպես էր բնութագրում նրա սպանված եղբորորդի Գնելի կինը՝ սյունյաց Փառանձեմ իշխանուհին, որն Արշակ Բ-ի կինը դառնալուց հետո տակավին ատելույթյամբ էր լցված նրա նկատմամբ ասելով, թե «թավամազ մարմին ունի, թուխ գույն ունի» («թաւ է մարմնով, և թուխ է գունով») <sup>71</sup>:

Թավամազ Օհանի ավանդազրույցի դեպքում ակնհայտ է, որ Օղաբաշօղլուն ոչ միայն քաղաքի թուրք մեծամեծներից է, այլ, ըստ էության, պաշտոնյա արքունիքում, բառացի՝ սենեկապետ, կամ պաշտոնյայի որդի<sup>72</sup>: Վերջինիս իր հարսնացուի պատճառով չարախոսում և մատնում են Օհանին, ինչից հետո Օղաբաշօղլուն սպանվում է: Գնելն Արշակին մերձավոր թագավորացն էր, պատանդ էր պահվել Բյուզանդիայում, վերադառնալուց կայսրը նրան շնորհում է հյուպատո-

<sup>66</sup> Ավանդության մասին է ավելի ուշ հիշատակում պատմաբան Աեռն, 1903 թ. Անիի ավերակներ կատարած այցելության առթիվ. «Ավերակները սարսափ, սնոտի երկյուղ էին պատճառում. մնացել էր ավանդույթուն, որ գեղեցիկ քաղաքը մի հոգևորականի անեծքով է այդ վիճակին հասել: Աստծո բարկությունն էր այդտեղ թափվել...» (Աեռ, «Անի: Տպավորություններ, հիշատակներ. անցածն ու մնացածը», Եժ 10 հատորով, հ. 8, Երևան, 1985, էջ 185):

<sup>67</sup> Է. Խեմչյան, «Անեծք-սպառնալիքների և օրհնանք-բարեմաղթությունների կիրառումը Կարսի շրջանում», ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ ԳԱ, հ. 19, 2016, էջ 193-200:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 195-196:

<sup>69</sup> Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Ա, խմբագրությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Ղանալանյանի, Երևան, 1966, էջ 183:

<sup>70</sup> Նույն տեղում, էջ 199:

<sup>71</sup> Փաւստոսի Բիւզանդացու պատմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 192-193:

<sup>72</sup> Թուրքիայի հանրապետական շրջանից առաջ պնդել թուրքական տոհմանուն-ազգանունների առկայության մասին, ընդհանրապես, անիմաստ է:

սի<sup>73</sup> կոչում, ինչը կարող էր վկայել որոշակի հեռագնա հաշվարկների առկայության մասին: Ավելին, վերադառնալուց հետո Գնելը հաստատվում է Այրարատում (Կուաշ ավան), ինչը թագավորի և թագաժառանգի մենաշնորհն էր, Գնելն անգամ ծառայության էր վերցրել որոշ նախարարների որդիներին: Ի վերջո, Գնելին ևս շարախոսում են Արշակի առջև, ընդ որում, խարդավանքների հիմնական դերակատարը թագավորի մյուս եղբորորդի Տիրիթն է, որն իր հերթին ցանկանում էր տիրանալ Փառանձեմին: Արդյունքում Գնելն Արշակի հրամանով սպանվում է, ընդամին, այնքան բացեիբաց, որ սպանության ծրագրից տեղեկանում և կաթողիկոսի միջամտությունն է հայցում Փառանձեմը: Արշակն ինքը հետագայում հայտարարում է, թե «վասն կնոջն իւոյ եղև մահն Գնելոյ»<sup>74</sup>:

Օդաբաշօղլուի մահապատժից հետո հարսնացուին, այսպես թե այնպես, բռնություններ պետք է տիրանար Օհանը, ինչն առկա է Արշակ Բ-ի պարագային, որը քրիստոնյա թագավոր լինելով հանդերձ՝ ամենևին չէր խորշում բազմակնությունից և կանանոց ունենալուց: Փառանձեմից բացի, Արշակը կնություն էր առել Բյուզանդիայի կայսեր զարմուհի Օլիմպիային (Օլիմպիադա), իսկ Փավստոս Բուզանդի հաղորդմամբ, պարսից Շապուհ Բ արքան իր հերթին հետամուտ էր Արշակին կնություն տալ սեփական դստերը:

Հատկանշական է նաև, որ Թավամազ Օհանի ավանդազրույցի բոլոր տարբերակների վերջում խոսվում է երկրաշարժից փրկված Օդաբաշօղլուի կնոջ և զավակի մասին, ինչը դեպքերի սրբնթաց և կտրուկ զարգացման տեսանկյունից անբացատրելի է մնում: Հայկական տարբերակում Գնելին սպանելուց հետո բռնություններ կամ ըստ առկա կարգի տիրանալով Փառանձեմին՝ Արշակը նրանից ունենում է Պապ որդուն<sup>75</sup>:

<sup>73</sup> Հին հուն․՝ ὕπατος, բառացի՝ «փոխարեա», «կուսակալ», լատ. consul, Հին Հռոմում բարձրագույն ընտրովի պետական պաշտոնյա, Բյուզանդիայում՝ առավել նվազ ռազմադադախական գործառույթներով:

<sup>74</sup> Փաստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց, էջ 192:

<sup>75</sup> Մ. Աբեղյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը վերոհիշյալ դրվագի առնչությամբ նշում են դեռևս Հին Կտակարանում նշված և Մեծ Հայքում պահպանված հայրիշխանական տոհմի կենցաղային սովորությունը, որով անզավակ մահացածի կինն անցնում էր մահացածի եղբորը կամ այլ մերձավոր ազգականի, իսկ նրանից ծնվածը համարվում էր հանգուցյալի որդի (Սասնա ծռեր, հ. Բ, Բ մաս, խմբագրեց ակադ. Մ. Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1951, էջ 826): Միևնույնը դիտարկվել է «Սասնա ծռերի» որոշ պատումներում, երբ Դավթի մահից հետո հորեղբայրները կամ եղբայրները դեռևս տեղյակ չլինելով Մհերի ծննդից՝ կաթում են, թե նա անժառանգ է մահացել, ըստ այդմ, Դավթի ավագ եղբայր ձննդափորիկը, այլ պատումով՝ եղբայր (կամ հորեղբայր) Յուսն Վերգոն, Խանդավազի դիմում են հետևյալ խոսքերով. «Դավիթը մեռավ, իմ գլուխն է ողջ» (կամ «Կը պակսի շայ բալբան Դավիթ, քրզի չպակսի պարոն իրիկ»): Խանդավազը պատասխանում է, թե «Դավթի պեստ մարթ մեռնի, չես գամ, քրզի պեստ մա՛րթ առնիմ» և ինքնասպանություն է գործում (նույն տեղում): Որոշ պատումներում Մըսա Մելիքի և Դավթի որոշ ազգակցությունն ի նկատի առնելով՝ Մելիքի մահից հետո մայրն առաջարկում է Դավթին կնության առնել որդու այրիացած կնոջը, ինչը Դավթը մերժում է և արժանանում այրու անեծին (Տ. Զիբունի, Սասունական:

Հետաքրքիր է նաև ներսես Մեծի կերպարը: Վերջինս սերում էր Աբ. Գրիգոր Հուսավորչի ընտանիքից, որդին էր Աթանագինեսի և Բամբելչի, որն էլ, ըստ Բուզանդի, Տիրան թագավորի քույրն էր, այսինքն՝ կաթողիկոսն ինքը թագավորազն էր: Ավելին, մինչ հոգևորական ձեռնադրվելը ներսեսը գինվորական էր եղել և Արշակ Բ-ի արքունի սենեկապետը («սիրելի սենեկապետ արհային Արշակայ»)՝<sup>76</sup>: Ընդ որում, սենեկապետը բավական լուրջ պաշտոն էր Մեծ Հայքի արքունիքում, այն մաս էր կազմում թագավորի մերձավոր շրջապատի, վերահսկում էր արքունիքի ներքին գործերը և անգամ կարող էր որոշ դիվանագիտական բնույթի հանձնարարություններ կատարել: Օրինակ, Բուզանդը հիշատակում է Տիրան արքայի սենեկապետ Փիսակ Այունիին, որը տխրահռչակ դեր է ունենում պարսից կողմից Տիրանին կուրացնելու և իշխանությունից հեռացնելու գործում<sup>77</sup>:

Տեղեկանալով Գնելի սպանության հրահանգին՝ ներսեսը փորձում է տարհանոգել Արշակին, սակայն ականատես է լինում դահճապետի զեկույցին և ի տարբերություն Արշակավանի դեպքի՝ արդեն բացեիբաց նզովում է նրան և ամբողջ Արշակունյաց ցեղը. «Վասն զի ընդդէմ դարձար Քրիստոսի տեսոն քո, վասն այնորիկ անարգ լիջիր դու իբրև զշուր հեղեալ և ՚ի լարել աղեղան սորա՛ տկարասջիր: Եվ կործանումն՝ որ բերանով մարգարէին ածի ՚ի վերայ ձեռ, ըմպել ազգիդ Արշակունեաց գլետին բաժակն, արքջիք արբեսջիք և կործանեսջիք, և այլ մի՛ ևս կանգնեսջիք»<sup>78</sup>: Նման երկարաշունչ նզովքն արդեն իսկ բացատրում է բավական կարճ ժամանակահատվածում ոչ միայն Արշակ Բ-ի, այլև նրա որդի Պապի և մյուս վերջին ժառանգների ողբալի և անփառունակ վախճանը, միով բանիվ, Արշակունյաց հարստության իշխանության ավարտը Մեծ Հայքում: Ի վերջո, ներսես կաթողիկոսին թունավորելով սպանում է Արշակի որդի Պապ թագավորը, ինչը վկայված է հորենացու մոտ և առավել ծավալուն՝ Բուզանդի երկում<sup>79</sup>:

Վերոհիշյալ մանրամասներից կարելի է եզրակացնել, որ, ըստ էության, թուրքական ավանդազրույցում ներսեսի և Գնելի կերպարները միաձուլվել են, նույնացվել են նաև նրանց գործողությունները, ինչը բնորոշ է բանահյուսական գործընթացին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են Բուզանդի երկում և թուրքական ավանդազրույցում միմյանց համապատասխանող կետերը:

---

«Սասմանց տուն», «Սասմայ ծներ» կամ «Սասունցի Գալիթ» անուններով ծանօթ Հայ ժողովրդական դրեյգանավէպին եօթը ճիւղին ամբողջական պատմութիւն, Բ. 1, Փարիզ, 1942, էջ 874-875): Միևնույնը դիտարկվում է Գնելի մահից հետո, երբ Տիրիթը համամանն պատգամ է ուղարկում այրիացած Փառանձեմին, որին, ի վերջո, կնության է առնում հանգուցյալի մերձավոր արյունակից Արշակը (Փառասոսի Բիւզանդացու պատմութիւն Հայոց, էջ 190):

<sup>76</sup> Նույն տեղում, էջ 108:

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 78:

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 189:

<sup>79</sup> Նույն տեղում, էջ 330-334:

	«Պարսից պատերազմ» (Արշակ Բ-ի վեպ)	«Անի ֆաղափի կործանման մասին ավանդագրույցը» («Թավամազ Օհանի ավանդագրույցը»)
<b>Գլխավոր հերոս</b>	Արշակ Բ («Թավամազ», ըստ Բուզանդի)	Թավամազ Օհան (Օհաննես)
<b>Հակառակորդ</b>	-Գնել՝ թագավորագն, բյուզանդական հյուպատոսի կոչմամբ, -Ներսես կաթողիկոս՝ Արշակ Բ նախկին սենեկապետ	Օղաբաշօղլու (սենեկապետի որդի)՝ Անիի մահմեդականների մեծամեծներից
<b>Արգելք</b>	Զբնակվել Այրարատում (արհայական մենաշնորհ)	Զամունանալ առանց «առաջին գիշերվա իրավունքի» (արհայական մենաշնորհ)
<b>Արգելքի խախտումը</b>	Գնելն առժամանակ բնակվում է Այրարատում (Կուաշ), կուրացած պապի մոտ	Օղաբաշօղլուն գաղտնի որոշում է ընտանիք կազմել մինչև հոր մահը
<b>Խախտման հետևանքը</b>	-Գնելին շարախոսում են արհայի առջև կնոջ պատճառով, -Գնելն սպանվում է, -Արշակը կնության է առնում Գնելի կնոջը, որից ունենում է որդի	-Օղաբաշօղլուի գաղտնի ամուսնության ծրագիրը մատնում են արհային, -Օղաբաշօղլուն կախաղան է հանվում, -Թավամազ Օհանը ցանկանում է բռնի տիրանալ Օղաբաշօղլուի հարսնացուին, որը որդու հետ փրկվում է
<b>Պատիժը</b>	-Ներսես կաթողիկոսն անիծում է Արշակին և Արշակավանը, որը կործանվում է արհավիրքից և ամայանում, -Արշակը բանտարկվում և մեռնում է Անհուշ բերդում	Օղաբաշօղլուն անիծում է Անին, որը կործանվում է երկրաշարժի հետևանքով և ամայանում

Անշուշտ, կարևոր և էական են տեսանելի ընդհանրությունները, որոնք իրենց հերթին միանշանակ կարող են ապացուցել վիպական թեմայի պատկանելությունը հայոց բանահյուսությանը:

Ընդհանրապես, «Պարսից պատերազմ» հերոսավեպի կամ Արշակ Բ-ի վեպի որոշ տարրերի առկայությունը, մասնավորապես, թյուրքական «Քյոոզլի» էպոսում ժամանակին համոզիչ կերպով մատնանշվել է ժորժ Դյումենգիլի<sup>80</sup> և Հայկ Պերպերյանի (Բերբերյան)<sup>81</sup> կողմից: Ֆրանսահայ բանասեր, արևելագետ Հ. Պերպերյանն իր «Արշակ Բ եւ Քեոսոզլու» ուսումնասիրության մեջ եզրակացրել է, որ «Քեոսոզլուի գրոյցին մէկ մասը Արշակի վէպէն սերած է: Այս մասը նախապէս Պէտք է որ անշատ եղած ըլլայ եւ պատմական Քեոսոզլուի անուան շուրջ կազմուած դիցազնավէպէն վերջ ձուլուած անոր հետ»<sup>82</sup>: Պերպերյանի կարծիքով, «Արշակ առած է Ռուշան կամ Քեոսոզլու-Ռուշան անունը», իսկ երկու վեպերի ձուլումը կատարվել է հայ աշուղների կողմից<sup>83</sup>: Պերպերյանի ամփոփումը միանշանակ է, որ «թուրքերէն լեզուով պատմուած դիցազներգութեան մը մէջ պահուած է հայ թագաւորի մը վէպին մէկ մասը»<sup>84</sup>:

Բնականաբար, մանավանդ, նոր ժամանակներում կատարված որոշ փոփոխություններն, ինչպես հայկական «Օհանը» թուրքական «Օրհանով» փոխարինելն, առաջին հերթին, նպատակ են հետապնդում ավանդազրույցն ամբողջությամբ թրքացնել և ջնջել դրանից հայկականության հետքերը, մյուս կողմից, նշմարվում է մի ենթագիտակցական միտում՝ թուրք ուսումնասիրողներն իրենք էլ իրականում չեն կարողանում ընկալել նյութը: Թուրք ասացողներն ու բանահավաքներն իրենք էլ վստահաբար քաջ գիտակցել են, որ, օրինակ, քրիստոնյա հայերին բազմակնությունը կամ «առաջին գիշերվա իրավունքը» բացարձակ բնորոշ չէր, սակայն անգիտակցաբար ավանդազրույցի մեջ ներմուծել են իրենց միանգամայն անծանոթ, օտար հնագույն ավանդազրույցի շերտեր:

Ըստ այդմ, մնում է երկու ճանապարհ՝ ամբողջությամբ թրքացնել նյութը, ինչը Թուրքիայում որևէ բարդություն չի ներկայացնում, կամ այն օգտագործել հայ-թուրքական հակամարտության առավել «լուսաբանման» նպատակով, բնականաբար, հակահայ քարոզչության շրջանակներում:

Այնուամենայնիվ, թուրքերի (թյուրքերի) հակառակորդ Հայոց թագավորի կերպարն էլ նորություն չէ թուրքական և, ընդհանրապես, թյուրքական վիպա-

<sup>80</sup> G. Dumézil, «Les légendes de «Fils d'aveugles» au Caucase et autour du Caucase», *Revue de l'histoire des Religions*, vol. 117, pp. 50-74, Paris, 1938, pp. 64-74.

<sup>81</sup> Հ. Պերպերյան, Արշակ Բ. եւ Քեոսոզլու: Արտատպուած «Ապագայ» շաբաթաթերթէն սրբագրութիւններով եւ յաւելուածներով: Փարիզ, 1938:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 40:

<sup>83</sup> Նույն տեղում, էջ 42-43:

<sup>84</sup> Նույն տեղում, էջ 43:



կան ավանդույթի համար, ինչին անդրադարձել ենք առանձին ուսումնասիրություններ<sup>85</sup>: Հստ այդմ, Անի քաղաքի կործանման մասին ավանդազրույցն առնվազն պետք է դասել տվյալ շարքին:

SAMVEL RAMAZYAN

### THE TURKISH LEGEND ABOUT THE DESTRUCTION OF THE CITY OF ANI AND ITS ARMENIAN ROOTS

**Key words:** Ani, Armenian king, Ohan the Hairy (Kılı Ohan), Odabashoglu, P'awstos Buzand, St. Nersēs, Step'anos Orbelean, Yovhannēs Erznkats'i Pluz, Arshak II (Arsaces II), Gnel, O. Belli.

The article discusses the legend about the destruction of Ani or the death of the Armenian king Ohan (Ohannes) the Hairy, recorded by Turkish folklorists in the Kars region, in which actually the memory of the devastating earthquakes of Ani has been preserved. At the same time, it is obvious that the legend about the curse (anathema) of Ani is allogenic (exogenous) and, in general, not characteristic of Turkish folklore.

The analysis of the story proves that its basis actually lies in the legend about the destruction of Ani by earthquake as a result of the curse of the 13<sup>th</sup> century Armenian chronicler and philosopher, Archimandrite Yovhannēs Erznkats'i Pluz. It was well-known and current among Armenians even in the 19<sup>th</sup>–20<sup>th</sup> cc., so the legend of the “cursed city” simply could not fail to pass to the local foreigners, in this case, to the Turks living in the Kars region, who later had to interpret it in their own way.

A more detailed study of the legend leads to the conclusion that it also contains characteristic elements of the Armenian epic *Persian War* (Epic of Arshak II). One can obviously see important and essential commonalities which in their turn prove that the epic theme belongs to Armenian folklore.

The personage of the Armenian king, the opponent of the Turks, is not new for Turkish (Turkic) epic tradition. Accordingly, the legend about the destruction of the city of Ani should have been included in this series.

<sup>85</sup> С. Рамазян, “Образ армянского правителя в тюркской эпической традиции” (սուլազրույթի մասին ընթացում):

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները  
(ժողովման պատմութեան համառօտ ուրուագիծ).....5

### ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Ղազար Ջահկեցու «Գիրք աղօթից»-ի 1742-1744 թթ.  
տպագրված տարբերակները .....32

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ներսես Շնորհալու ծննդյան թվականն ըստ  
իւր եղբորորդի Գրիգորի հիշատակարանի .....44

### ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայոց հնագոյն թաղման ծեսերը  
(ըստ ազգածին ավանդության տվյալների).....56

### ԶՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Պատեր և պարիսպներ. մասնավորի ու հանրայինի միջև  
սահմանները Կիլիկյան Հայաստանի փառաբային միջավայրում.....68

### ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ինչո՞ւ, ե՞րբ և որքա՞ն են ուսում «Սասնա ծռեր»  
էպոսում ու միջնադարյան գրականության մեջ. սնունդն ու ծեսը .....81

### ՍԱՄՎԵԼ ՌԱՄԱԶՅԱՆ

Անի փառաբի կործանման մասին թուրքական  
ավանդագրոյցը և դրա հայկական արմատները.....108

### ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀԵՆՐԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Մարդպետություն գործակալությունը և մարդպետ պաշտոնյան.....129

### ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ պատմագրության ուսումնասիրման փառաբական դիտանկյան  
ներածական հարցեր.....158

**ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ՌՈՒՋԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

ԺԳ դարում ընդօրինակված  
 «Բանմ իմաստասիրաց»-ի շոք տարբեր բնագիր ..... 189

**ԱՐՎԵՍ**

**ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ**

Գրիգոր Նարեկացու տեսիլի պատկերագրությունը  
 (Մանրանկարներից մինչև Մխիթարյան  
 հայրերի հրատարակությունների փորագրանկարներ) ..... 204

**ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

«Հաղորդությունը» Թորոս սարկավազի և Թորոս Տարոնացու  
 մանրանկարներում ..... 216

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, ԳԻԱՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ**

Սանահինի արքայական-իշխանական հանգստարանները  
 Զաֆարյանների տապանատան հնագիտական  
 պեղումների համապատկերում ..... 225

**ՄԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ**

Սրվելի վանական համալիրը  
 (2021-2022 թթ. պեղումների արդյունքները) ..... 235

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ**

**ԱՐՏԱԿ ՄԱՂԱՅԱՆ**

Արցախի բնակավայրերն ըստ Երուսաղեմի  
 և Հակոբյանց վանքի նվիրակի հաշվետումարի ..... 252

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ**

Արամ Քերովբեան, *Զայն Յանապատի. Եկեղեցական  
 երաժշտության բարեկարգումը ԺԹ. դարու վերջաւորութեան,*  
 Ակն ընկերակցութիւն, Փարիզ, 2017 ..... 271

---

**ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆՆԵՐ**

<b>Տաթևիկ Մանուկյան, Գեվորգ Տեր-Վարդանյան (1951-2023)</b> .....	294
<b>Կարեն Մաթևոսյան, Վարդան Գեվրիկյան (1964-2023)</b> .....	301
<b>Լինա Պիրադովա, Հայդե Բուշնաուզեն (1939-2023)</b> .....	309
<i>ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ</i> հանդեսի հոդվածների ձևավորմանը վերաբերող պահանջներ .....	311

---

**CONTENTS**
**BIBLIOGRAPHY****Gevorg Ter-Vardanyan**

The Manuscript Collections of Mashtots Matenadaran ..... 5

**Marine Sargsyan**

The Versions of the *Prayer Book* by Ghazar Jahkets'i  
Printed in 1742–1744 ..... 32

**HISTORY AND ETHNOGRAPHY****Karen Matevosyan**

The Date of Birth of Catholicos Nersēs Shnorhali  
according to the Colophon of his Nephew Grigor ..... 44

**Armen Petrosyan**

Funeral Rites of Earliest Armenians  
(According to Ethnogenic Tradition) ..... 56

**Zohrab Gevorgyan**

Walls and Fences: Boundaries between the Private  
and Public in the Urban Environment of Cilician Armenia ..... 68

**Hayk Hambardzumyan**

Why, When and How Much They Eat in the Epic  
"Sasna Tsrer" and in Medieval Literature? Food and Ritual ..... 81

**Samvel Ramazyan**

The Turkish Legend about the Destruction of the  
City of Ani and its Armenian Roots ..... 108

**Haykaz Gevorgyan, Henrik Khachatryan**

The Office of Mardpetut'yun and the Mardpet Official ..... 129

**Ashot Sargsyan**

Introductory Issues Related to the Study of Armenian  
Historiography from the Political Aspect ..... 158

---

**PHILOLOGY**
**Ruzan Poghosyan**

- Four Different Copies of “Sayings of Philosophers”  
from the 13th Century.....189

**ART****Shoghakat Devrikyan**

- Iconography of Grigor Narekats‘i’s Vision  
(From Miniatures to Engravings of Mekhitarists’ Publications).....204

**Lusine Barseghyan**

- Communion of the Apostles in the Miniatures  
of T‘oros the Deacon and T‘oros Taronats‘i.....216

**ARCHAEOLOGY****Arman Nalbandyan, Diana Mirijanyan**

- Sanahin as a Royal and Princely Cemetery.....225

**Meri Safaryan**

- The Monastery Complex of Srvegh (Results of excavations 2021–2022).....235

**PUBLICATION****Artak Maghalyan**

- The Settlements of Artsakh according to the Donation  
Book of the Saint James Monastery of Jerusalem.....252

**BOOK REVIEW****Arusiak Tamrazian**

- Aram Kerobian, *A Voice in the Wilderness. Reform of the Church  
Music in the Late 19th Century*, Paris, 1917.....271

**OBITUARIES**

- Tatevik Manukyan**, Gevorg Ter-Vardanyan (1951-2023).....294

- Karen Matevosyan**, Vardan Devrikyan (1964-2023).....301

- Lina Piradova**, Heide Buschhausen (1939-2023).....309

## СОДЕРЖАНИЕ

## БИБЛИОГРАФИЯ

**Геворг Тер-Варданян**

Рукописные собрания Матенадарана им. Маштоца..... 5

**Марине Саргсян**

Версии «Молитвенника» Казара Джахкеци,  
напечатанная в 1742-1744 гг. .... 32

## ИСТОРИЯ И ЭТНОГРАФИЯ

**Карен Матевосян**

Дата рождения католикоса Нерсеса Шнорали согласно  
памятной записи его племянника Григора ..... 44

**Армен Петросян**

Похоронные обряды  
древнейших армян (по данным этногонического предания)..... 56

**Зограб Геворгян**

Стены и заборы: границы  
между частным и общественным в городской  
среде Киликийской Армении ..... 68

**Айк Амбарцумян**

Почему, когда и сколько едят в эпосе «Сасунские удалцы»  
и в средневековой литературе? Еда и ритуал ..... 81

**Самвел Рамазян**

Турецкое предание о разрушении города  
Ани и его армянские корни ..... 108

**Айказ Геворгян, Генрик Хачатрян**

Ведомство *мардпетутюн*  
и должность *мардпета* ..... 129

**Ашот Саргсян**

Размышления об изучении армянской  
историографии в политическом аспекте ..... 158

## ФИЛОЛОГИЯ

**Рузан Погосян**

Четыре разные рукописи  
“Изречений философов” XIII века ..... 189

## ИСКУССТВО

### Шогакат Деврикан

Иконография видения Григора Нарекаци  
(от миниатюр до гравюр изданий Мхитаристов)..... 204

### Лусине Барсеган

“Причащение апостолов” в миниатюрах Тороса Дьякона  
и Тороса Таронаци..... 216

## АРХЕОЛОГИЯ

### Арман Налбандян, Диана Мириджанян

Санаин как царская и княжеская усыпальница..... 225

### Мери Сафарян

Монастырский комплекс  
Срвег (результаты раскопок 2021-2022 гг.)..... 235

## ПУБЛИКАЦИЯ

### Артак Магальян

Поселения Арцаха согласно книге пожертвований  
иерусалимского монастыря свв. Иаковов..... 252

## РЕЦЕНЗИЯ

### Арусяк Тамразян

Арам Керобян, *Глас в пустыне. Реформа церковной  
музыки в конце XIX века*, Париж, 2017..... 271

## НЕКРОЛОГИ

Татевик Манукян, Геворг Тер-Варданян (1951-2023)..... 294

Карен Матевосян, Вардан Деврикан (1964-2023)..... 301

Лина Пирадова, Хайде Бушхаузен (1939-2023)..... 309



**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 35**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 35**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 35**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ Ներսես Շնորհալի, Մանրուսմունֆ (Ղրիմ), 1352 թ., ՄՄ 591  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Զախսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 20

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի քվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)